# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

Հ Հ Արագածոտն մարզ, ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252) 2-43-93, 093-98-00-05,
ֆաքս (0252) 2-44-45 , կայք՝ www. aparan.am, էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com

N – 020 /
02 . 04. 2013 թ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Արագածոտնի մարզպետարան է ուղարկվում Ապարանի քաղաքային համայնքի ավագանու NN 11 – 23 որոշումները:

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

03 04 2013
9/1603-13

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

# ՈՐՈՇՈՒՄ

24 Հունվարի 2013 թվականի N 08 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 69 – րդ և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35 – րդ հոդվածների պահանջներին համապատասխան՝
Ապարան քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ Ապարանի քաղաքային համայնքի 2012 թ բյուջեի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվությանը՝ համաձայն հավելվածի:
2. Քաղաքապետ պարոն Գ. Աբրահամյանին՝
ա/. ավելի զարգացնել ձեռքբերումները, հետևողականորեն իրականացնել քաղաքի զարգացման քառամյա ծրագրով նախատեսված միջոցառումները:
բ/. ակտիվացնել աշխատանքները հողի և գույքի հարկերի բազաների ճշտման, տեղական հարկերի հավաքագրման աշխատանքներում հրապարակայնություն ու թափանցիկություն ապահովելու, աշխատանքները պատշաճորեն կազմակերպելու ուղղությամբ:
գ/. լիարժեքորեն կիրառել համայնքի ղեկավարին օրենքով տրված լիազորությունները՝ հարկերի վճարումից խուսափողներից գանձումները օրենքով սահմանված կարգով կատարելու համար:
դ/. բարձրացնել աշխատակազմի և համայնքային ենթակայության հիմնարկների ղեկավարների պատասխանատվությունը՝ աշխատանքներում հրապարակայնության ապահովման, համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման գործում պատշաճ մասնակցություն և շահագրգռվածություն դրսևորելու, բյուջետային միջոցների առավել արդյունավետ ծախսման ուղղությամբ:
ե/. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել 2013 թ բյուջեի պարտադիր կատարումն ապահովելու համար:

Ավագանի՝ Կողմ ( 7 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված

**ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ապարանի քաղաքապետի 2012 թ գործունեությունը նպատակաուղղված է եղել է համայնքի կենսագործունեության բոլոր ուղղություններում բնականոն աշխատանքային մթնոլորտի ապահովումը, քաղաքացիների խնդիրների ու հոգսերի լուծման նկատմամբ սրտացավ մոտեցման ապահովումը, քաղաքում բարոյա-հոգեբանական առողջ մթնոլորտի և սոցիալական արդարության պահպանումը:

Ապահովվել է կատարված աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ ինտերնետային կայքի, տեղական հեռուստաալիքի, քաղաքացիների սպասարկման կենտրոնի և ցուցադրական վահանակների միջոցով:

Ավագանու որոշումները, քաղաքապետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքի բյուջեն, բյուջեի կատարողականները, քաղաքապետարանի գործունեության հիմնական ուղղությունները ընդգրկված են Ապարանի քաղաքային համայնքի կայքում, որը հասու է ցանկացած քաղաքացու:

2012 թ ընթացքում կայացել է համայնքի ավագանու 8 նիստ, ընդունվել են 43 որոշումներ:

Ընդունվել են քաղաքապետի 185 որոշումներ, 137 կարգադրություններ:

Հետևողական աշխատանքներ են տարվել հողերի և գույքի բազաների ճշգրտման, համայնքային եկամուտների հաշվարկային ցուցանիշների ճիշտ արտահայտման ուղղությամբ:

2012 թ աճուրդ - վաճառքի և ուղիղ վաճառքի միջոցով օտարվել են 7646 քմ հասարակական նշանակության հողատարածքներ, որոնց վաճառքի միջին արժեքը կազմել է 604,5 դրամ:

Օտարվել է 2760 քմ գյուղատնտեսական նշանակության հողատարածք՝ 1 քմ՝ 176 դրամ միջին արժեքով:

Ապարանի քաղաքային համայնքի զարգացման քառամյա ծրագրի շրջանակներում 2012 թ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ասֆալտապատվել են Բաղրամյան փողոցը՝ 2500 գմ, 700 գմ մայթեր, կառուցվել են 1300 գմ՝ ջրատարներ
- Նժդեհի, Գայի,Ս.Գևորգի, Աբովյան, Ծաղկունյաց փողոցում կատարվել են ասֆալտի փոսային նորոգումներ:
- Մշակույթի կենտրոնը, ՄՊՍ կենտրոնը, թիվ 1 և 2 մանկապարտեզներն ապահովվել են նոր գույքով:
- Վերանորոգվել է մանկապատանեկան մարզադպրոցը
- Վերանորոգվաել է կոմունալ ծառայության վարչական շենքը
- Հիմնանորոգվել են բազմաբնակարանային 4 շենքերի տանիքներ:
- Կառուցվել է 4 մանկական խաղահրապարակ
- Վերականգնվել է Ս. Գևորգի փողոցի սելավատարի վրա գտնվող կամուրջը
- Վերակառուցվել է հրապարակի գիշերային լուսավորությունը
- Վերանորոգվել են թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզները, ապահովվել են նոր գույքով:
- Լուծվել են ընթացիկ բազմաթիվ խնդիրներ:

Օժանդակություն է ցուցաբերվել փոքր և միջին բիզնեսի ներդրման և զարգացման ուղղությամբ նպաստավոր պայմանների ապահովման և առաջացած խնդիրները օպերատիվորեն լուծելու ուղղությամբ:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքի բյուջեի մուտքերի ապահովման, ֆինանսական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման ուղղությամբ:

Համայնքի 2012 թ բյուջեն պլանավորվել է հետևյալ ցուցանիշներով՝

| ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | ՀՀ դրամ |
|---|---|
| ՀՀ Կառավարության կողմից տրվող դոտացիան | 84303100 |
| Համայնքի վարչական մասով սեփական եկամուտներ | 37000000 |
| ՀՀ Կառավարության կողմից տրվող ՔԿԱԳ բաժնի պահպանման ծախսեր | 2525200 |
| ՀՀ կառավարության կողմից արվեստի դպրոցին տրվող սուբվենցիա | 1987200 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ | 125815500 |
| Համայնքի ֆոնդային մասով եկամուտներ | 15.000.000 |
| ՀՀ կառավարության կողմից մարզադպրոցի նորոգման համար տրված սուբվենցիա | 2000000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ՝ | 142815500 |
| ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | 4248100 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ՝ | 147063600 |

Զգալիորեն կարգավորվել են հողի և գույքի բազաները, որի հետևանքով պակասել են քաղաքացիների դժգոհությունները և նկատվում է հարկերը կամովին մուծելու դրական միտումներ, նրանցից մի մասն որդեն պարտաճանաչորեն մուծում են հարկերը:
Դրա հետևանքով տարեց – տարի պակասում են ապառքները, ավելանում մուտքերը և պարտաճանաչ հարկատուների թվաքանակը:
Համայնքի սեփական եկամուտների ապահովման գործում տարվում է ամենօրյան օպերատիվ հաշվառում և վերլուծություն, բացատրական և նախազգուշական աշխատանքներ:
Կատարած աշխատանքների արդյունքում 2012 թ համայնքի բյուջեի կատարման պատկերն այսպիսին է՝

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ 2012 Թ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| Հ/Հ | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | 2012թ ՊԼԱՆ | ԿԱՏԱՐՎԵԼ Է /ՀՀ ԴՐԱՄ/ | ԿԱՏԱՐՄԱՆ % |
|---|---|---|---|---|
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 8000,0 | 8021,0 | 100,3 |
| 2 | Հողի և գույքի վարձ | 4400,0 | 3683,1 | 83,7 |
| 3 | Գույքահարկ | 9500,0 | 11471,3 | 120,7 |
| 4 | Տեղական Տուրքեր՝ | 3200,0 | 2724,4 | 85,1 |
| 5 | Տեղական վճարներ | 700,0 | 305,2 | 43,6 |
| 6 | Ինքնակամ կառույցի վճար | 700,0 | 427,1 | 61,0 |
| 7 | Պետական տուրքեր | 4000,0 | 2391,0 | 59,8 |
| 8 | Վարձավճարներ | 6000,0 | 6905,0 | 115,1 |
| 9 | Վարչական տուգանք | 500,0 | 220,0 | 44,0 |
| Ընդամենը՝ վարչական | | 37000,0 | 36148,1 | 97,7 |
| | Կապիտալի գործառույթից | 15000,0 | 17356,9 | 115,7 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝ | | 52000,0 | 53505,0 | 103,0 |

ՀՀ համապատասխան օրենքի կիրառման արդյունքում 2012 թ զիջվել է մինչև 2008 թ բոլոր ապառքները՝ շուրջ 30.000.000 դրամի հողի և գույքի հարկեր:
Դրա շնորհիվ բազաները բերվել են համեմատաբար ավելի կառավարելի տեսքի:
Միաժամանակ, համայնքի բյուջեի ձևավորման գործում դեռևս կան լուրջ թերություններ, որոնք և օբյեկտիվ են, և սուբյեկտիվ:

Վարձակալությունների մասով թերակատարման պատճառն այն է, որ տարվա ընթացքում լուծվեցին հարկային տեսչությունը և կադաստրի ստորաբաժանումը, որոնք իրենց զբաղեցրած վարձակալած տարածքների մի մասը հետ վերադարձրեցին: Միաժամանակ հարկադիր մարմիններում կան կատարողական վարույթներ, որոնցում հարցի լուծումը դեռևս ձգձգվում է:

Տեղական տուրքերի մասով թերակատարումը պայմանավորված է թվով 3 օբյեկտների փակմամբ, իսկ 5-ի կողմից դադարեցվել է ծխախոտի վաճառքը:

Չի կատարվել նաև պետական տուրքերի պլանը, որը նույնպես ունի օբյեկտիվ պատճառներ՝ նոտարից առանձին գործառույթներ փոխանցվել են կադաստրին, առանձին սպասարկման տեսակներ հանվել են

Դեռևս մեծ թիվ են կազմում պարտքատերերը, որոնց մի մասը համայնքից երկար տարիներ բացակայողներն են, մահացածների ժառանգությունը դեռևս չբացողները և անհայտ հողատերերը: Քիչ չեն նաև վճարումների հնարավորություններ ունեցողները, որոնց մոտ դեռևս բացակայում է համայնքի նկատմամբ պատասխանատվության և քաղաքացիական պարտքի զգացումը:

Որոշակի խնդիրներ կան տեղական տուրքերի ժամանակին հավաքագրման գործում, առևտրով զբաղվող առանձին ձեռներեցներ խուսափում, կամ շատ դժվարությամբ են վճարում են ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվության տեղական տուրքերը, նույն վերաբերմունքն է դրսևորվում նաև տաքսի ծառայությունների կողմից:

Համայնքի ղեկավարի կողմից հարկերի և տուրքերի վճարումից թերացողների և խուսափողների նկատմամբ դեռևս ցուցաբերվում է հանդուրժողական վերաբերմունք, չի կիրառվում օրենքով սահմանված վարչական միջոցներ: 2012 թ ընթացքում որևէ դատական հայց չի ներկայացվել:

Աշխատանքներ են տարվել սոցիալապես անապահով ընտանիքներին և խմբերին օգնություն և աջակցություն ցուցաբերելու, սոցիալական լարվածությունը հնարավորինս մեղմացնելու ուղղությամբ:

Քաղաքապետի որոշմամբ շուրջ 62 մարդու տրվել է դրամական օգնություն՝ 1.495.000 դրամի չափով, Հայրենական մեծ պատերազմի վետերաններին տրվել է դրամական պարգևատրում, դրամական օգնություններ են հատկացվել երկրապահի և զոհվածների ու պատերազմի վետերանների միություններին:

Սոցիալապես անապահով ուսանողներին հատկացվել է ուսման վարձավճար:

Երևանում սովորող ուսանողների ամենօրյա տեղափոխման համար հունվար – մայիս ամիսներին տրամադրվել է ավտոբուս:

Զիջվել է զոհված ազատամարտիկների և բազմաթիվ այլ սոց. անապահով ընտանիքների գույքահարկը:

Մանկապարտեզների գործունեությունը եղել է մեր կարևորագույն և առանցքային խնդիրներից:

Զեղչեր են կիրառվել միակողմանի և երկկողմանի որբ, բազմանդամ ընտանիքների երեխաների ուսման վարձավճարների ուղղությամբ՝ արվեստի դպրոց և մանկապարտեզներ հաճախողների նկատմամբ:

Բոլոր հնարավորությունները մոբիլիզացվում են առավել արդյունավետորեն կազմակերպելու մանկապարտեզների գործունեությունը, նվազեցնել շենքային բավարար պայմանների բացակայության հանգամանքը: 2 մանկապարտեզներն էլ ապահոված են անհրաժեշտ գույքով ու պարագաներով, տրվել է լիարժեք սնունդ, ապահովվել է սննդի բավարար կալորիականություն:

Զգալի թիվ են կազմում մանկապարտեզից անվճար և զեղչով օգտվող երեխաները:

Դպրոցների ամենատարբեր խնդիրներին փորձել ենք հնարավորին աջակցություն ցուցաբերել:

Ամեն տարի հանդիսավորությամբ և ըստ արժանվույն նշվում է ուսուցչի տոնը, բոլոր մանկավարժներին տրվել են հուշանվերներ, լավագույնները պարգևատրվում են քաղաքապետարանի պատվոգրերով և նվերներով: Բոլոր 1-ին դասարանցիներին նվիրվել է պայուսակներ:

Մանկապատանեկան մարզադպրոցը, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը, մշակույթի

կենտրոնը գործում են անվճար հիմունքներով, որոնցում գործող խմբերում ընդգրկված են շուրջ 300 երեխաներ:

Անցկացվել են բազմաթիվ քաղաքային միջոցառումներ, որոնք նպաստում են երեխաների սպորտային և գեղագիտական դաստիարակությանը:

Կազմակերպվել են տարբեր միջոցառումներ, որոնք քաղաքում դարձել են ավանդական՝ Հին ամանորի տոնախմբություն, ուսանողական հավաք, մայրության տոն, հաղթանակի տոն, Ապարանի հերոսամարտի տոնակատարություն, շրջանավարտների հավաք, ուսուցչի տոն, բազմաթիվ համերգներ, գրական ու երաժշտական երեկոներ, ֆուտբոլի, շախմատի, սպորտլանդիայի, ազգային խաղերի և այլ առաջնություններ, որոնց ընթացքում մասնակիցներին հանձնվել են նվերներ:

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ 2012 Թ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| N | ՀՈԴՎԱԾԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ՊԼԱՆ Հազ. դրամ | ԿԱՏԱՐՎԵԼ Է Հազ. դրամ | ԿԱՏԱՐՄԱՆ % |
|---|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ | 147079,7 | 138721,6 | 94,3 |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով՝ | 74022,5 | 67915,5 | 91,7 |
| | ՈՐԻՑ՝ | | | |
| - | Օրենսդիր և գործադիր մարմինների և պետական կառավարում | 38335,0 | 36134,8 | 94,3 |
| - | Հիմնական խմբին չդասվող պարտքային պարտավորություններ | 1223,4 | 969,1 | 79,2 |
| - | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 34464,1 | 30811,6 | 89,4 |
| 2 | ՔԿԱԳ բաժնի պահպանում | 2525,2 | 2525,2 | 100,0 |
| 3 | Գյուղատնտեսության և հակահամաճարակային միջոցառումներ | - | - | - |
| 4 | Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի մասով | 15930,0 | 15222,2 | 95,6 |
| | Որից՝ | | | |
| - | Գրադարանի մասով | 5635,0 | 5218,3 | 92,6 |
| - | Մշակույթի մասով | 10295,0 | 10003,9 | 97,2 |
| 5 | Կրթության բնագավառի մասով՝ | 52157,0 | 50668,7 | 97,1 |
| | Որից՝ | | | |
| - | Նախադպրոցական կրթության բնագավառի մասով՝ | 19382,0 | 18612,9 | 96,0 |
| - | Նախնական մասնագիտական կրթության բնագավաի մասով՝ | 8420,0 | 8210,1 | 97,1 |
| - | Արտադպրոցական դաստիարակության բնագավառի մասով | 24355,0 | 23845,7 | 97,9 |
| 6 | Սոցիալական հատուկ արտոնություններ բնագավառի մասով | 2445,0 | 2390,0 | 97,8 |

Գնահատելով կատարված աշխատանքներն ու առաջիկա անելիքները, հաղթահարելով ներկա դժվարություններն ու պրոբլեմները մենք անհաժեշտ է միահամուռ ջանքերով նախանձախնդիր լինել ձեռքբերումները պահպանելու և ավելի զարգացնելու գործին:

Քաղաքապետարանի գործունեության ապահովման գործում արդյունավետ է եղել համայնքի ավագանու գործարար և համերաշխ աշխատաոճը, ձեռնարկումներին սատարելու մոտեցումը:

Մտահղացումներն ու անելիքները դեռևս շատ շատ են և որոնց լուծման գործում ակնկալելով մեր ամբողջ բնակչության օժանդակությունը, մենք տրամադրված ենք ավելի շատ աշխատանք կատարելու վճռականությամբ:

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

## ՈՐՈՇՈՒՄ

24 հունվարի 2013 թվականի N 09 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և 38-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան՝
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ դասական աճուրդ-վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 12030 քմ գյուղ. նշանակության հողատարածքներ:

2.Հաստատել հողատարածքների օտարման մեկնարկային գները և հավելաճի քայլերը՝

| N | Հողատարածքի հասցեն | Ծածկա-գիր | Նպատակային նշանակությունը և հողատեսքը | Մակերես /քմ/ | Մեկնարկ գինը՝ ՀՀ դրամ | Հավելաճի քայլ-դրամ | Գործառնական նշանակությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ք.Ապարան,Սարի թաղ | 204-001-01 | Վարելահող 5-րդ կարգ | 4787 | 95000 | 5000 | Վարելահող |
| 2 | Ք. Ապարան, գերեզ.մոտ | Գ. Մ 34 / 2 | Վարելահող 2-րդ կարգ | 1000 | 243000 | 13000 | Վարելահող |
| 3 | Ք. Ապարան, Ռավզներ | 210 - 303 | Վարելահող 2-րդ կարգ | 6230 | 311500 | 16000 | Վարելահող |

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդ - վաճառքի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ավագանի՝ Կողմ ( 7 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)


# ՈՐՈՇՈՒՄ

24 Հունվարի 2013 թվականի N 10 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 5050 քմ հողատարածքներ վարձակալության տրամադրելու մասին:

2.Հաստատել հողատարածքների վարձակալման մեկնարկային գները և հավելաճի քայլերը՝

| N | Հողատարածքի հասցեն | Ծածկա-գիր | Նպատակային նշանակությունը և հողատեսքը | Մակերես /քմ/ | Մեկնարկ վճարը՝ ՀՀ դրամ | Հավելաճի քայլ-դրամ | Վարձակալ. ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյոլերի տարածք | 218-322 | Վարելահող 4-րդ կարգ | 1220 | 1300 | 100 | 25 |
| 2 | Գյոլերի տարածք | 220-031 | Վարելահող 4-րդ կարգ | 500 | 1000 | 50 | 25 |
| | Խոտերի տարածք | 0223-0006 | Խոտհարք 1-ին կարգ | 1640 | 2500 | 150 | 25 |
| 3 | Ռավազների տարածք | 0210-0006 | Վարելահող 2-րդ կարգ | 1690 | 2000 | 100 | 25 |

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել հողատարածքների վարձակալության տրամադրման հրապարակայնությունը, ապահովել մրցույթի պատշաճ կազմակերպումը:

Ավագանի՝ Կողմ ( 7 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

## ՈՐՈՇՈՒՄ
28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 11 - Ն

### ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2013 – 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարան քաղաքային համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ Ապարան քաղաքային համայնքի զարգացման 2013 - 2016 թվականների քառամյա ծրագիրը՝ համաձայն N - 1 հավելվածի:

2. Պարտավորեցնել համայնքի ղեկավար պարոն Գ. Աբրահամյանին՝

ա/. մոբիլիզացնել քաղաքապետարանի աշխատակազմի, համայնքի վարչական տարածքում գործող բոլոր կազմակերպությունների և բնակչության ուժերը՝ զարգացման քառամյա ծրագրով նախատեսված միջոցառումները սահմանված ժամկետներում պատշաճորեն կատարելու համար:

բ/. ծրագրի իրականացման ընթացքի մասին հաճախակի իրազեկել բնակչությանը:

գ/. ապահովել քաղաքի զարգացման քառամյա ծրագրի իրապարակայնությունը

3. Ավագանու բոլոր անդամների խնդիրը համարել անհրաժեշտ օգնություն և օժանդակություն ցուցաբերելու համայնքի ղեկավարին՝ քաղաքի զարգացման քառամյա ծրագրի իրականացման գործում, նպաստել քաղաքի բնականոն զարգացմանը, բնակչության կյանքի պայմանների բարելավմանը, սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային խնդիրների լուծմանը :

4. Սույն որոշման կատարման ընթացքին անրադառնալ յուրաքանչյուր տարվա վերջին:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավար պարոն Գ. Աբրահամյանի վրա:

| | | | |
|---|---|---|---|
| Ավագանի՝ | Կողմ ( 6 ) | Դեմ ( 0 ) | Ձեռնպահ ( 0 ) |

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Չափի միավոր | Աշխատանքի ծավալը | Ծրագրի արժեքը (հազ.դրամ) | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | Ֆինանսավորման աղբյուրները | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2013 | 2014 | 2015 | 2016 | Համայնքի բյուջե | Դոնոր կազմակ. | Պետբյուջե, այլ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Ջալալյան, Փոշտեր, Լուսավորիչ թաղամասերի գազաֆիկացում | գմ | 1800 | 24000,0 | 24000,0 | | | | 3600,0 | | 20400,0 |
| 2 | Թիվ 1 դպրոցի վերանորոգում | քմ | 4800 | 210000,0 | 70000,0 | 70000,0 | 70000,0 | | | | 210000,0 |
| 3 | Արվեստի դպրոցի վերանորոգում | քմ | 900 | 35000,0 | | 35000,0 | | | | 35000,0 | |
| 4 | Մարզադպրոցի շենքի հիմնանորոգում, / հնարավոր է նաև՝ նորի կառուցում/ | քմ | 500 | 8000,0 | 8000,0 | | | | 2000,0 | 6000,0 | |
| 5 | Մարզադաշտի կառուցապատում | քմ | 8000 | 30000,0 | 30000,0 | | | | | 30000,0 | |
| 6 | Մանկապարտեզի կառուցում | քմ | 1000 | 300000,0 | --- | 150000,0 | 150000,0 | — | | | 300000,0 |
| 7 | Բազմաբնակարանային 7 շենքերի տանիքների հիմնանորոգում | քմ | 5000 | 60000,0 | 15000,0 | 15000,0 | 15000,0 | 15000,0 | | | 60000,0 |
| 8 | Բաղրամյան 43 վթարային շենքի ապամոնտաժում և տեղում նորի կառուցում | քմ | 2000 | 500000,0 | | 250000,0 | 250000,0 | | | | 500000,0 |
| 9 | Բազմաբնակարանային 7 բնակելի շենքերի բակերի ասֆալտապատում | քմ | 2000 | 14000,0 | 3000,0 | 3000,0 | 4000,0 | 4000,0 | 14000,0 | | |
| 10 | Բաղրամյան և Նժդեհի փողոցների մայթերի ասֆալտապատում, եզրաքարերի և պատերի նորացում | քմ | x | 100000,0 | 100000,0 | -- | -- | – | | | 100000,0 |
| 11 | Ներքաղաքային 3 կմ ճանապարհների ասֆալտապա | քմ | 18000 | 150000,0 | | 50000,0 | 50000,0 | 50000,0 | | | 150000,0 |
| 12 | Ներքաղաքային ասֆալտապատ փողոցների փոսային նորոգումներ | քմ | 2000 | 14000,0 | 3000,0 | 3500,0 | 3500,0 | 4000,0 | 14000,0 | | |
| 13 | Ներքաղաքային 6 կմ գրունտային ճանապարհների նորոգում և բարեկարգում | քմ | 30000 | 8000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 8000,0 | | |
| 14 | Թաղամասերում կոյուղագծերի կառուցում | գմ | 2000 | 20000,0 | 5000,0 | 5000,0 | 5000,0 | 5000,0 | 4000,0 | 16000,0 | |
| 15 | Գիշերային լուսավորության վերականգնում Գայի, Ս.Գևորգի, Ծաղկունյաց և Պ. Սևակի փողոցներում | գմ | 4000 | 8000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 2000,0 | 8000,0 | | |
| 16 | Գերեզմանատների պարսպապատում | գմ | 1000 | 15000,0 | | 5000,0 | 1000,0 | | | 15000,0 | |
| 17 | Զբոսայգու կառուցապատում | քմ | 15000 | 15000,0 | | 5000,0 | 5000,0 | 5000,0 | | 15000,0 | |
| 18 | Տ. Պետրոսյանի անվան հանգստյան գոտու կառուցապ. | քմ | 600 | 4000,0 | | 2000,0 | 2000,0 | 1000,0 | 3000,0 | | |
| 19 | Հուշաղբյուրի վերակառուցում | հատ | 1 | 5000,0 | | 5000,0 | | | | | 5000,0 |
| 20 | Մանկական 6 խաղահրապարակների կառուցում | հատ | 6 | 8000,0 | 4000,0 | 4000,0 | | | 2000,0 | 6000,0 | |
| 21 | Դաշտամիջյան ճանապարհների նորոգում | քմ | 10000 | 2000,0 | 1000,0 | | 1000,0 | | 2000,0 | | |
| 22 | Մեքենա - սարքավորումների ձեռք բերում | Միավոր | 3 | 15000,0 | 10000,0 | 5000,0 | | | 15000,0 | | |
| 23 | ԲՈՒՀ կամ քոլեջ – ուսումնարանի հիմնում | միավոր | 1 | x | x | x | x | x | x | x | x |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 12 - Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԱՍՆԱԿԻ ԲԱՇԽՄԱՆ, ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.12.2012 Թ N 40 – Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ և 62-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի պահանջների՝ Ապարանի քաղաքային համայնքի 2013թ բյուջեի պահուստային ֆոնդից 3000,0 հազ. դրամը բյուջեի ծախսային հոդվածների միջև բաշխելու, ՀՀ կառավարության 2013 թ 07.02.2013 թ N 130-Ն որոշմամբ համայնքին տրված 720,0 հազ. դրամի սուբվենցիան 2013 թ բյուջեում ներառելու նպատակով՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարանի քաղաքային համայնքի 2013 թ բյուջեի եկամտային մասում ավելացնել 720,0 հազ. դրամ:
2. Ապարանի քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեով ձևավորված պահուստային ֆոնդից 3000,0 հազ. դրամն ուղղել բյուջեի ընթացիք ծախսերի մասին:
3. Հաստատել համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերի N 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ հատվածներում կատարվող փոփոխությունները՝ համաձայն N 1, 2, 3, 4 հավելվածների:

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 13 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.11.2012 Թ «ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2013 Թ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 32 - Ա ՈՐՈՇՄԱՆ N 2 և 2/1 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ 8-րդ և 26-րդ, 32- րդ հոդվածի՝ 4-րդ և 5-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետերի պահանջներով՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Վերահաստատել Ապարանի քաղաքապետարանի աշխատակազմի 2013 թ պաշտոնային դրույքաչափերը՝ N 2 և N 2/1 հավելվածներում կատարված փոփոխություններով:

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)


## ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 14 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.11.2012 Թ «ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ 2013 Թ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 33 - Ա ՈՐՈՇՄԱՆ N N 4, 5, 6, 7, 8, 9, 10, 10/1, 11, 11/ 1 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26 - րդ, 32 –րդ հոդվածի 4 – րդ և 5 – րդ կետերի պահանջներով՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Վերահաստատել Ապարանի քաղաքային համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ 2013 թ պաշտոնային դրույքաչափերը՝ N N- 4, 5, 6, 7, 8, 9, 10, 10/1, 11, 11/1 հավելվածներում կատարված փոփոխություններով և լրացումներով:

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

## ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 15 - Ն

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետին համապատասխան՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարանի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը՝ փոփոխություններով և լրացումներով:

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

# ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 16 - Ա

«ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ 2013 Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.11.2012 Թ N 35 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ և 20-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 29.11.2013 թ N – 35 - Ա «Ապարանի քաղաքային համայնքում տեղական վարձավճարների 2013 թ դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման N 15 և N 16 հավելվածներում կատարել փոփոխություններ և N 15 և N 16 հավելվածները վերահաստատել ըստ ներկայացվածի:

2. Սույն որոշման 5 –րդ, 6-րդ, 7-րդ կետերը համարել անվավեր: Համաձայն որի՝ քաղաքային մշակույթի կենտրոնում, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում և մանկապատանեկան մարզադպրոցում սաների ուսուցումը սահմանվում է անվճար:

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված N 15
Ապարանի քաղաքային համայնքի ավագանու
29.11.2012 թ N 35 – Ա որոշման

Փոփոխությունները՝
Ապարանի քաղաքային համայնքի ավագանու
28. 03. 2013 թ N - որոշմամբ:

«ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ ԱՈՎՈՐՈՂՆԵՐԻ
2013 Թ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | Մասնագիտության անվանումը | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 1 | Դաշնամուրի դասարանում սովորողի ամսեկան վարձավճարի չափը՝ | 3500 |
| 2 | Ջութակի դասարանում սովորողի ամսեկան վարձավճարի չափը՝ | 1500 |
| 3 | Կիթառի դասարաններում սովորողի ամսեկան վարձավճարի չափը՝ | 2500 |
| 4 | Դուդուկ - շվի դասարանում սովորողի ամսեկան վարձավճարի չափը՝ | անվճար |
| 5 | Քանոնի դասարանում սովորողի ամսեկան վարձավճարի չափը՝ | անվճար |
| 6 | Դհոլի դասարանում սովորողի ամսեկան վարձավչարի չափը՝ | 2000 |
| 7 | Վոկալի դասարանում սովորողի ամսեկան վարձավճարի չափը՝ | 2000 |
| 8 | Կերպարվեստի բաժնում սովորողի ամսեկան վարձավճարի չափը՝ | 1500 |
| Արտոնություններ՝ | | |
| 1 | Ծնողազուրկ երեխայի համար / միակողմանի և երկկողմանի / | անվճար |
| 2 | Հաշմանդամ երեխայի համար՝ | անվճար |
| 3 | Նույն ընտանիքից 2 երեխաների համար՝ | 1-ը՝ 50% |
| 4 | Նույն ընտանիքից 3 և ավել երեխաների համար՝ | 1-ը՝ անվճար |
| 5 | Միաժամանակ 2 խմբերում ընդգրկված երեխայի համար | 1-ը՝ 50% |

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Քոչարյան

Հավելված N 16
Ապարանի քաղաքային համայնքի ավագանու
29.11.2012 թ N 35 – Ա որոշման
Փոփոխությունները՝
Ապարանի քաղաքային համայնքի ավագանու
28. 03. 2013 թ N - որոշմամբ:

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ՍԱՆԵՐԻ
ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ 2013 Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | Տեղական վարձավճարի տեսակի անվանումը | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 1 | Մեկ երեխայի ամսական վարձավճարի չափը՝ | 3500 |
| Արտոնություններ՝ | | |
| 1 | Նույն ընտանիքից 2 երեխայի դեպքում՝ | 1-ը՝ 50% |
| 2 | Նույն ընտանիքից 3 և ավել երեխաների համար՝ | 1-ը՝ անվճար |
| 3 | Ծնողազուրկ երեխայի համար՝ / միակողմանի և երկկողմանի / | անվճար |
| 4 | Հաշմանդամ երեխայի համար՝ | անվճար |

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Քոչարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

## ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 17 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.07.2012 Թ N 19 – Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 12.07.2012 թ N 19 – Ն որոշմամբ թույլատրվել է համայնքի ղեկավարին դասական աճուրդ վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող մշակույթի տան նախկին շենքն՝ իր սպասարկման տարածքով: Որից հետո աճուրդ վաճառքը երկու անգամ / 20.08.2012 և 03.12.2012 թ / չի կայացել՝ հայտերի բացակայության պատճառով:
Հաշվի առնելով համայնքի ղեկավարի կարծիքն այն մասին, որ Ապարանի տարածքի համար շենքի վաճառքի արժեքն իրոք բարձր է, առավել ևս, որ շենքը կարիք ունի զգալի ներդրումների, որպեսզի այն վերանորոգվի և ծառայեցվի սահմանված նպատակային նշանակության:
Վաճառքի մեկնարկային գինը սահմանվել է 19.500.000 դրամ, իսկ հավելաճի քայլը՝ 1.000.000 դրամ: 19.500.000 դրամից 1.864.000 դրամը հողի արժեքն է, իսկ 17.636.000 դրամը՝ շենքի:
Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան.
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Շենքի վաճառքի հաստատված մեկնարկային 17.636.000 դրամ գինը նվազեցնել 10 %-ով և հաստատել 15.872.400 դրամ: Հողի վաճառքի գնի հետ միասին այն կկազմի՝ 17.736.400 դրամ: Հաստատել շենքի վաճառքի մեկնարկային գինը՝ 17.736.400 դրամ, հավելաճի քայլը թողնել անփոփոխ՝ 1.000.000 դրամ:

3. Աճուրդի պայմաններում ներառված պահանջները թողնել անփոփոխ: Համաձայն որի՝ Աճուրդի մասնակցության և գնման իրավունք վերապահել այն ֆիզիկական ու իրավաբանական անձանց, ովքեր առաջիկա 3-4 տարիների ընթացքում տվյալ շինությունը պետք է վերակառուցեն և ծառայեցնեն որպես բնակչության հանգստի, ազատ ժամանցի և զվարճանքի նպատակով:

4. Քաղաքապետին՝ ապահովել աճուրդ - վաճառքի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

# ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 18 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.01.2013 ԹՎԱԿԱՆԻ «ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 03 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. 2013 թվականի հունվար – մարտ ամիսների ընթացքում քաղաքապետարանի և համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների համար գնված գույքն ընդգրկել գույքագրման ցանկում՝ համաձայն հավելված 1:

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

# ՑԱՆԿ

2013 թ հունվար – մարտ ամիսներին ձեռք բերված հիմնական միջոցների

Ապարանի քաղաքապետարան

| Հ/Հ | Գույքի անվանումը | Չ/Մ | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | Բազմաֆունկցիոնալ տպագրական սարք | հատ | 1 |
| 2 | Էլ. տաքացուցիչ | հատ | 1 |

«Ապարանի քաղաքային համայնքի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ

| Հ/Հ | Գույքի անվանումը | Չ/Մ | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | Փոշեկուլ | հատ | 1 |
| 2 | Վահանակ /DMX/ | հատ | 1 |
| 3 | Կոմբիկ / Bheringer/ | հատ | 1 |
| 4 | Կոմբիկ /Fender Mudtang/ | հատ | 1 |
| 5 | Լուսային էֆեկտ /Par 64 LED/ | հատ | 4 |
| 6 | Ազգագրական պարի կոշիկ | զույգ | 20 |

«Ապարանի քաղաքային համայնքի ՄՊՍ կենտրոն» ՀՈԱԿ

| Հ/Հ | Գույքի անվանումը | Չ/Մ | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | Էլ. հաշվիչ /երկտարիֆային/ | հատ | 1 |

«Ապարանի քաղաքային համայնքի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ

| Հ/Հ | Գույքի անվանումը | Չ/Մ | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | Դաշնամուր «Ռոյֆլեռ» | հատ | 1 |
| 2 | Դաշնամուր « Ռեյեռ » | հատ | 1 |

«Ապարանի քաղաքային համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ

| Հ/Հ | Գույքի անվանումը | Չ/Մ | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | Համակարգիչ | կոմպլ եկտ | 1 |
| 2 | Բազմաֆունկցիոնալ տպագրական սարք | հատ | 1 |
| 3 | Կ – 130 բուլդոզեր | հատ | 1 |
| 4 | Ջեռնասայլակ | հատ | 1 |
| 4 | Համակարգչային վիչեստր | հատ | 1 |

«Ապարանի քաղաքային համայնքի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ

| Հ/Հ | Գույքի անվանումը | Չ/Մ | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | Ջրաչափ | հատ | 1 |

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 19 - Ա

## ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ 2012 Թ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Զիջել Ապարան քաղաքի զոհված ազատամարտիկների ընտանիքների 2013 թ գույքահարկը՝ համաձայն ցուցակի՝

| N | Զոհվածի ընտանիքի անդամի Ազգանունը, անունը և հայրանունը | Գույքի տեսակը | Գույքահարկ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տոնոյան Էլմիրա Մարտինի | Ավտոմեքենա «ՈՒԱԶ» | 7500 |
| 2 | Եղիազարյան Երվանդ Ռաֆիկի | Ավտոմեքենա «Սուբարու» | 18300 |
| 3 | Սիրեկանյան Մովսես Մայիսի | Ավտոմեքենա «Օպել» | 9000 |
| 4 | Սահակյան Մարգարիտ | Հաս. շինություն | 11463 |
| 5 | Բաղդասարյան Ռայա Բաղդասարի | Ավտոտնակ և Ավտոմեքենա | 9341 |
| 6 | Գեղամյան Ժորա Թաթուլի | Ավտոտնակ | 271 |
| 7 | Մարգարյան Մելանյա Սերյոժայի | Բնակ. շինություն | 2145 |
| 8 | Ասատրյան Անահիտ Ազատի | Բնակ. շինություն | 1430 |
| 9 | Սիմոնյան Հայկազ Մնացականի | Բնակ. շինություն և ավտոմեքենա | 7451 |
| 10 | Սմբատյան Սուսաննա Ռաֆիկի | Ավտոմեքենա | 14947 |
| 11 | Երեմյան Հրաչ Համբարձումի | Ավտոմեքենա | 8991 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | 90839 |

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 20 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՀԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱԿՏԱՆՈՂ ՀՈՂՈՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Ապարան քաղաքի բնակիչ Վահե Մանուկյանին կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքը չի հակասում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով քաղ. Վահե Մանուկյանի դիմումի վերաբերյալ Ապարանի քաղաքապետի առաջարկությունը.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Ապարանի քաղաքապետին՝ ք.Ապարան, Իսահակյան 1/2 հասցեում քաղ. Վ. Մանուկյանին պատկանող ավտոտեխսպասարկման կայանի զբաղեցրած 0,0044 հա հողատարածքը, կադաստրային ծածկագիր՝ 02-002-0130-0085, ուղղակի վաճառքով սեփականության իրավունքով օտարել Վահե Մանուկյանին:
2. Հաստատել հողատարածքի օտարման գինը՝ 35640 դրամ / կադաստրային արժեք 810 դրամ x 44 քմ /:
3. Քաղաքապետին՝ ապահովել համապատասխան փաստաթղթեր գույքի գրանցման համար:

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

# ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 21 - Ա

## ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ապարան քաղաքի բնակիչ Սարգիս Սարգսյանը Հայրենական մեծ պատերազմի 1-ին խմբի հաշմանդամ է, դիմել է զիջելու իր ավտոմեքենայի գույքահարկը, որը կազմում է 6900 դրամ:

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետը՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Զիջել քաղ. Սարգիս Սարգսյանի ավտոմեքենայի գույքահարկը՝ 6900 դրամի չափով:

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)


# ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 22 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԼԵՎԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ապարան քաղաքի բնակիչ Լևիկ Գևորգյանի ընտանիքը գտնվում է սոցիալապես անապահով վիճակում, դիմել և խնդրել է զիջելու իր ավտոմեքենայի գույքահարկը, որը կազմում է՝ ապառքը՝ 19460 դրամ, տույժը՝ 4310 դրամ:

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետը՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Զիջել քաղ. Լևիկ Գևորգյանի ավտոմեքենայի գույքահարկը՝ 23770 դրամի չափ:

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

## ՈՐՈՇՈՒՄ
28 ՄԱՐՏԻ 2013 թվականի N 23 - Ա

### ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՂՈՄՈՆ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ապարան քաղաքի բնակիչ Սողոմոն Խուրշուդյանի ընտանիքը գտնվում է սոցիալապես անապահով վիճակում, Գազ - 69 մակնիշի ավտոմեքենան 2009 թ չի շահագործվում, դիմել և խնդրել է զիջելու ավտոմեքենայի գույքահարկը, որը կազմում է` ապառքը` 26000 դրամ, տույժը` 9454 դրամ:

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետը` Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է`

1. Զիջել քաղ. Սողոմոն Խուրշուդյանի ավտոմեքենայի գույքահարկը` 35454 դրամի չափով:

Ավագանի` Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Արսեն Պողոսյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար` Գ. Աբրահամյան